ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆՑ ԿՈՒՍԱՆԱՑ ՎԱՆՔԻ ԸՆԾԱՅԱՄԱՏԵԱՆԸ

Նուիրում է Նոր Ջուղայի Ս. Կատարինեանց վանքի 400-ամեայ յոբելեանին

Էլիզաբեթ Թաջիրեան

Արեւելեան Հայաստանի բնակչութեան շահաբասեան բռնի տեղահանութիւնից եւ Պարսկաստանի խորքերը քշուելուց յետոյ առաջին իսկ տասնամեակում Սպահանի հայաբնակ արուարձանի՝ Նոր Ջուղայի տարբեր թաղերում կառուցուեցին առաջին հայկական եկեղեցիները: Տարօրինակ չպէտք է համարել այս իրողութունը: ԺԷ. դարի առաջին քառորդում Մովսէս Գ. Տաթեւացի կաթողիկոսի[1] օրօք հոգեւոր-լուսաւորական շարժումն իր զարգացման բարձրակէտում էր եւ նոյնիսկ մեծ բռնագաղթը չխոչնդոտեց հայոց հոգեւոր կեանքի վերածննդին եւ հայ գաղթականութիւնն իր հայրենի Ջուղայի ու Գողթնի բազմաթիւ լքեալ հոգեւոր շէնքերից յետոյ նոր բնակավայրերում եւս ստեղծեց լուսաւորութեան, գրչութեան եւ աղօթքի կենտրոններ:

Նոր Ջուղայում կառուցուած առաջին եկեղեցին Ս. Գէորգն էր (1609 թ.): Առաջիններից մեկն էլ Նոր Ջուղայի Ջարսու թաղում 1623 թ. բռնագաղթուածների առաջին իսկ սերնդի կողմից կառուցուած Ս. Կատարինեան կուսանաց վանքն էր: Ինչպէս մեր ուսումնասիրութեան առարկայ ընծայամատեանի[2] նախաբանում է ասւում. «... Թվին ՌՀԲ (1623), եղեւ սկիզբն բարեաց եւ պատճառ շնորհաց, հաստատութիւն օրինաց, նոր Լուսաւորիչն Հայաստանեայց սուրբ Մովսէս հոգեւոր տէր եւ պատրիարգն ամենայն աշխարհաց, նոր արեգակ ծագեաց եւ 'ի յերկիրս Պարսից եհաս, բազում կարգ եւ սահմանք քրիստոնէից ուղղեաց, արանց եւ կանա[ն]ց վանքեր հաստատեաց»:

Մովսես Գ. Տաթեւացի կաթողիկոսի առաջարկ-յորդորով էլ Խոջա Եղնազարը «հիմնարկում» է Ս. Կատարինեանց կուսանաց վանքի շինարարութիւնը՝ «զարդարեալ ջահիւք եւ լապտերօք եւ արար տեղ պատարագի եւ փառաբանութեան անմահ թագաւորին Քրիստոսի»: Խոջա Եղնազարը, բացի եկեղեցու կառուցումից հոգացել է նաեւ միաբանուհիների խցերի եւ այլ տնտեսական կառոյցների շինարարութիւնը: Ինչպէս նաեւ նուիրել է եկեղեցուն «... մէկ խաչ, մէկ աւետարան, մէկ այսմաւուրք, մէկ սկա, մէկ շուրջառ եւ մէկ սաղավարթ, մէկ աւազանի ծածկոց, Բ[2] մոմդան, մէկ սկոյ աղլուխ»[3]:

---

1 Տե՛ս **Ակինեան Հ. Ներսէս վրդ.**, *Մովսէս Գ. Տաթեւացի Հայոց կաթողիկոսն եւ իր ժամանակը*, Վիեննա, 1936 (Ազգային մատենադարան, ՃԼԹ):

2 Հայոց որոշ վանքերի ընծայամատեաններին (կամ՝ ködük-քէօթուկներին) նուիրուած ուսումնասիրութիւններից տե՛ս **Փափազեան Յ.**, *Ակոռու Ս. Յակոբայ վանքի քէօթուկը*,- «Բանբեր Մատենադարանի», հտ. 12, Երեւան, 1977, էջ 191-215: *Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քէօթուկը)*, աշխատասիրութեամբ Պարոյր Մուրադեանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2007: **Տէր-Վարդանեան Գ.**, *Վենետիկի Սուրբ Խաչ եկեղեցու ընծայամատեանը*,- «Էջմիածին», 2013, թիւ ԺԱ, էջ 60-83 եւ այլն:

3 Ս. Կատարինեան կուսանաց վանքի Ընծայամատեանի տեղեկութիւններին նախկինում անդրադարձ են ունեցել Յ. Տէր Յովհաննեսեանցը, Լ. Խաչիկեանը, Յ. Փափազեանը, Շ. Խաչիկեանը, Սեպուհ Ապլանեանը եւ ուրիշներ: Ընծայամատեանը տե՛ս Minasian Collection of Armenian Material, Collection 1632, box 53, f. 4, Charles E. Young Re-

of Armenia

Ամենայն հաւանականութեամբ Ս. Կատարինեանց միաբանութիւնը, աւանդոյթը պահպանելով, յաջորդում էր հին Ջուղայում կամ շրջակայքում գտնուող կուսանաց անապատին, քանի որ որպէս առաջին միանձնուհիներ Նոր Ջուղայի պատմութեան տարեգիր Յ. Տէր Յովհաննեանցը նշում է Շահ Աբասի կողմից հայ ժողովրդի տարագրութեան ընթացքում Նոր Ջուղա գաղթած եւ Ս. Կատարինեան վանքի առաջին միանձնուհիները համարուող երեք կոյսերի՝ Ուռուփսանային, Թագուհուն եւ Հռիփսիմէին[4]:

Ս. Կատարինեանց վանքը գտնուում է Զարսու թաղում՝ 1621 թ. կառուցուած Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու անմիջական հարեւանութեամբ[5]: Իր համեստ ճարտարապետութեամբ՝ վանքում բնակուող եւ ժուժկալ կեանքով ապրող միանձնուհիների Նոր Ջուղայի գաղթօջախում կատարած հոգեւոր, լուսաւորչական, մշակութային եւ տնտեսական դերին տարբեր հայեցակէտերով անդրադարձել են բազմաթիւ մասնագէտներ[6]:

Հարկ է նշել, որ անապատը, սկզբնական շրջանում (շուրջ 5 տասնամեակ) պատսպարելով 30-ից աւելի կոյսերի, հետագայում նոյն աշխուժութիւնը չի ունեցել, սակայն դա չի խանգարել նրան այս գաղթօջախում գոյատեւել շուրջ 400 տարի՝ զբաղուելով երիտասարդ աղջիկների հոգեւոր կրթութեամբ ու դաստիարակութեամբ: Նշենք, որ 1857 թ. սկսած միաբանութիւնում գործել է օրիորդաց վարժարան՝ հնդկահայ բարերար Մանուկ Յորդանեանի նախաձեռնութեամբ: Իր յարկի տակ պատսպարել է որբուհիներ եւ հովանաւորել կարիքաւոր կանանց:

Անապատն ունեցել է իր համեստ տնտեսական կեանքը՝ իր միանձնուհիների ձեռքի գործերի վաճառքի, վանքապատկան հողամասերի ստացուածքների[7], թեմական առաջնորդների, քալանթարների, պարզ հաւատացեալների կողմից զանազան նուիրատուութիւնների՝ այդ թւում նաեւ «ողորմութիւն արքային Պարսից»[8], Ռուսիոյ կայսեր[9] կողմից եւ այլն: Անկարեւոր չենք համարում նշել նաեւ, որ Ս. Կատարինէ վանքի համար ստեղծուած հիմնադրամի բերած տոկոսներով, կամ կլորիկ գումարներով մշտապէս օգտակար են եղել նաեւ հնդկա-

search Library, Library Special Collections, University of California, Los Angeles. Փաստաթղթի չափերը՝ 123x24սմ: Յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը Նորա Աւետեանին փաստաթղթի որակեալ լուսանկարի տրամադրման համար: Սեպուհ Ասլանեանի վերջերս լոյս տեսած յօդուածում, փաստաթղթի ճշգրիտ տեղորոշումը՝ box 53ի փոխարէն վրիպմամբ նշուած է box 28 (տե՛ս **Sebouh David Aslanian,** *" 'A Ship with Two Rudders?': Gregorio di Girach-Mirman of Venice, Global Armenian Trade,-* Art and Religion in Medieval Armenia, NY, 2022, p. 107, footn. 52):

4 Տե՛ս **Տէր Յովհաննեանց Յ.,** *Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան,* Նոր Ջուղա, 1881, հտ. Բ, էջ 224:

5 Տե՛ս **Տէր Յովհաննեանց Յ.,** նշ. աշխ., էջ 224: **Իսրայէլեան Կիւրեղ ծ. վրդ.,** *Նոր Ջուղայի Ս. Կատարինեան անապատը,-* «Սիոն», 1944, Ժ-ԺԲ, էջ 192-196: **Հասրաթեան Մ.,** *Նոր Ջուղայի եկեղեցիները,-* «Հայ Արուեստ», 2004, թիւ 2, էջ 14: **Հախնազարեան Ա.,** *Նոր Ջուղայի ճարտարապետութիւնը,* «Հայ Արուեստ», 2004, թիւ 2, էջ 11:

6 **Տէր Յովհաննեանց Յ.,** *Պատմութիւն Նոր Ջուղայու,* հտ. 2, էջ 223-237: **Իսրայէլեան Տ. Կ. ծ. վրդ.,** *Նոր Ջուղայի Ս. Կատարինեան անապատը,-* «Սիոն», 1944, թիւ Ժ-ԺԲ, էջ 192-199, 1945, թիւ 1-2, էջ 23-26: **Խուցեան Խ. քհ.,** *Թիֆլիսի Կուսանաց անապատի պատմութիւնը,* Թիֆլիս, 1914, էջ 79-100: **Հախնազարեան Ա.,** *Նոր Ջուղայի ճարտարապետութիւնը,-* «Հայ Արուեստ», 2004, թիվ 2, էջ 11, **Հասրաթեան Մ.,** *Նոր Ջուղայի եկեղեցիները,- «Հայ Արուեստ»,* 2004, թիվ 2, էջ 14: **Մանուկեան դոկտ. Ա. քհն.,** *Հայ եկեղեցու սարկաւագունիները,* Երեւան, 2023, էջ 93-100:

7 **Տէր Յովհաննեանց Յ.,** *Պատմութիւն Նոր Ջուղայու,* հտ. Բ, էջ 228:

8 Նոյն տեղում, էջ 227:

9 Նոյն տեղում էջ 228-229:

հայ համայնքի նախկին Նորջուղայեցի ընտանիքների որոշ՝ յատկապես իգական սեռի ներկայացուցիչները[10]:

Գրաւոր աղբիւրներն ու ձեռագրերի յիշատակարանները թոյլ են տալիս որոշակի պատկերացում ունենալ տարբեր թուականներին վանքում բնակուող 34 միաբանուհիների, սարկաւագուհիների եւ նրանց մայրապետների վերաբերեալ: Այսպէս 1660 թ. գրի առնուած Խորհրդատետրի յիշատակարանը անուանապէս յիշատակում է սբ. Կատարինեան ուխտի անդամներին. «... յիշեցէք զմիաբան սուրբ ուխտիս, որ են ժողովեալ աստ, զսրբասնեալ կուսանքս որ եւ ի սմա են եկամուտ, զսարկաւակուհիքն զՍառէն եւ զՏրիսիէն, զՍանդուխտն եւ փոքր Սառէն, զԳայիանէն, Յուղիտէն, Մարինոսն, Թագուհին, Հռիփսիմէն, Եղիսաբեթն, Դշխոյին, Վառվառն: Զմահդասիքն միւս Ուղիտէն, զմայրապետ Թանկիկն, Մարամն եւ Անային, Իշխանն, զՆունին եւ զմիւս Անային: Եւ սպասաւորք եկեղեցւոյն Հռուփսանէն, Շուշանն, Մարթէն, Եպրաքսէն, Սուփիէն, զմիւս Վառվառն, զՆանաջանն, միւս Թագուհին, միւս Հռիփսիմէն, Թալիթէն, դռնապան Մարգարիտն, բազմաշխատ Պօղոսն եւ հանգուցեալ միաբանք սոցին... Յիշեցէք սուրբ եկեղեցոյս զսպասաւոր Թեկղիէն, Եղինարն, Մարամն, Մամարն, յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք»[11]:

Սբ. Կատարինեանց վանքում պահուող Ճառընտրի յիշատակարանը հաղորդում է. «...ի թուականի մերոյ ՌՃԻ (1671), յաշխարհիս Պարսից արքայանիստ քաղաքիս ըստ գրոց Շօշ կոչեցելոյ, որ այժմ Ասպահան տարաձայնի, ի գեղաքաղաքիս Ջուղայու, ընդ հովանեաւ կուսակրօն վանիցս Սուրբ ամէնիմաստ Կատարինէ, քանզի մենարանիս այս են կուսանք թուով երեսուն կոյս, *որ միշտ զցայգ եւ զցերեկ անդադար աղօթս մատուցանեն առ Աստուած վասն աշխարհի: Աւարտ եղեւ շնորհիւն Քրիստոսի, ձեռամբ ի Սառա անուամբ կրօնաւորի, որ է բնիկ ինքն Դաշտցի, ի թագաւորութեան Պարսից Շահ Սլէմին, քանզի այս ամին եղեւ տառապանք Ջուղայու. զինչ եկեղեցի որ կայր խարաճ առաւ թագաւորն ԲՃՀԸ (278) թուման, եւս առաւել այս կուսանաց վանիցս երեսուն թուման, քանզի ոչ ունէին ուստեքէ ճար, ապաւինելով յԱստուած,* երթային ի դրունս Ջուղայու տառապանք մուրալով, եւս առաւել ծրտային օդոյն, ժողովեցին եւ ետուն զջուռումն (տուգանք) թագաւորական, *զի Տէր Աստուած մեր փրկեսցէ ի փորձանաց եւ ի տանջանաց յայսցանէ»*[12]:

Ձեռագրի գրիչը, սարկաւագուհի Սառան, որ ակնյայտօրէն կարեւոր դեր է խաղացել կանացի այս ուխտի գործունէութեան մէջ[13], *հետաքրքիր մանրամասնութիւններ է հաղորդում նաեւ իր ընտանիքի վերաբերեալ. «... ես նուաստս եւ յետինս Սառա անուն կրօնաւորս, փափագանօք գրեցի զճառս զկէսն եւ զմնացեալն ետու գրել յիշատակ ինձ եւ իմ ծնողացն Գէորգին եւ մօրն իմոյ Գօզալին եւ եղբօրն իմոյ Ղուկասին եւ քեռեացն իմոյ Դշխունին, Անայէ: Դարձեալ յիշեցէք զՍառայն եւ զպապն իւր Յովանէսն եւ զհանիկ իւր Եթարն եւ զհօրեղբայրն Տիրատուրն եւ զկողակիցն իւր Մարիամն: Դարձեալ յիշեցէք զՍառայն եւ զմիւս հօրեղբայրն զՏէր Անտոնն եւ զկողակիցն Խանտատիկն եւ որդիքն զՄովսէսն եւ զՏէր Սամվէլն, Աւետիքն եւ զհօրաքվերն Մարիամն եւ որդին Ազարէն եւ զդուստրն իւր Շուշանն: Դարձեալ յիշեցէք զՍառէն եւ*

10 Նոյն տեղում , էջ 227-228:

11 Տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի*, հտ. Ա, էջ 510:

12 Նոյն տեղում, էջ 301:

13 Սառան մահացաւ 1685 թուականին: Յիշատակարանը տեղեկացնում է. «Թվին ՌՃԼԴ (1685) Շամս ԺԹ-ումն Սուրբ Սարգիսին բարեկենդան ուրբաթ օր սրբազան եւ սրբակրաւն ընտիր **կուս Սառէն առ Աստուած փոխվեցաւ.** Աստուած զինքն ընդ իմաստուն կուսանս դասեսցէ, ամէն. լուս ի շաբաթ թաղում եղաւ» (նոյն տեղում, էջ 302):

Armenia

զմիւս հօրաքոյրն իւր Սոլթանսլիմն եւ կենակիցն իւր Առաքելն եւ որդիքն Աւետիքն եւ զդստերքն իւր Հռիփսիմէն եւ Ուստիանէն: Կրկին անգամ յիշեցէք զՍառայն եւ հանգուցեալ եղբարքն իւր Խաչատուրն, Յովանէսն եւ քվերքն իւր Հռիփսիմէն, Սալվինազն եւ դարձեալ յիշեցէք զՂուկասն եւ զկողակից իւր Մարիամն եւ որդիքն Գրիգորն, Սիմէօնն, որ սոքա ամենեքեան փոխեալ են առ Աստուած: Որ եւ մաղթեմ վայելողացդ եւ պատահողացդ ընդ սրբոյ երջանիկ հօրն Տէր Մարտիրոս սրբազան քահանային, որ վանիցս հայր գոլով, ուսուցանելով զամենեսին եւ զմահդասի Մխիթարին սպասաւոր առնելով ամենեցուն...»:

Ապա Սառան սկսում է անուանապէս յիշել 1671 թ. կուսանոցում եղած միաբանուհիներին ու մայրապետներին. «Զմայրապետ Եղիսաբեթին, զՄեխլու մահդասի Մարիամն, զմահդասի Թանգիկն, զմեր հացթուխ Նունիէն բազում աշխատանք ունին ի վերայ վանիցս եւ սոքա հանգուցեալ են առ Քրիստոս եւ Տէր Աստուած վարձատրեսցէ եւ դասեսցէ ընդ սուրբ կուսանացն, ամէն: Դարձեալ յերեսս ի գետին դնելով աղաչեմ զձեզ, ով սուրբ ընթերցողք, յիշեսջիք զսրբասնունդ զմիաբան Վառէն, որ մայր գոլով ամենեցուն, զԴրիսէն, զՍանդուղտն, զԹագուհին խոհեմ, զՈւռուփսանէն, զմեծ Վառվառն եւ զմիւս Վառվառն, զՇուշանն, զԱնային, զԵղիսաբեթն, զՄարիամն, զՆանաջանն, զՏալիթայն, զԵղինարն, զԹեկղին եւ զմիւս Թագուհին, զԽաթայնին, զդռնապան Ըռուփսանէն, զտնտես Գայիանէն, զՆունիկն եւ զշատ աշխատաւոր վանիցս Պողոսն, զՎառվառն եւ զմիւս Վառվառն յիշեսջիք ի Քրիստոս...»

Սբ. Կատարինեան վանքի ճառընտրի գրիչը (Սառայից յետոյ), 1738 թուականին տեղեկացնելով, որ «Թուին փոքր ՌՃՁԷ (1738) Նիր[հ]ան Ը.՝ Մարիամն, Շուշանն, Մանիէլն ձեռնադրեցան սրբազան Յարութիւն աստուածիմաս[տ] առաջնորդի շնոր[հ]իւն», թուարկում է վանքում եղած միաբանուհիներին. «...յիշեցէք սուրբ վանիս հասարակ միայբանաց անունքս, որ է մայրապետ Սանդուխտն, Վայրդնին, Հռիփսիմին, Իպրակսէն, Կատարինէն, միւս Հռիփսիմէն, Մարիամն, Նունիէն, Եղիսայբերթն, Մարինոսն, Թէկղին, միւս Եղիսաբեթն, Սափսափն, միւս Մարիամն Շուշանն, Մանիէն, Խոռոմն, յաւորն անցեալ զդռնապանն որ է Նուբարն, զդռնապանն երկրորդ որ է Օղիդէն, զդռնապանն ե[ր]րորդ Մարիամն...»[14]:

Սբ. Կատարինէի միաբանուհիների մեր ունեցած վերջին ցուցակը, պահպանուած նոյն ճառընտրում, թուագրւում է ԺԹ. դարի առաջին քառորդի վերջով: Այն հաղորդում է. «Գրեցաւ թիւն 1823, թիւն փոքր 208 մարտ 17, օրն շաբաթ ձեռնադրեցան սրբազան աստուածյիմաստ Կարապետ առաջնորդի ձեռամբ Կատարինէն, Ուստիանէն, Վառվառէն, Մարիամն, Սանտուղտէն, Հռիփսիմէն եւ է մեր բոլոր միաբանա հայրն սրբազան գրագիր եւ աշխատող Տէր Մարգարն եւ է բոլոր միաբանաց անուանքն են այսոքիկ. մայրապետ Իպրակսէն եւ Խորհրդակից Կատրինէն եւ մեծ Հռիսիմէն եւ տնտես Մարինսէն եւ Զոջոէն, Աղսաբերն եւ Մանիէն, Շուշանէն, բազմաշխատ Սաբասափէն եւ Վառվառէն, Հռիփսիմէն եւ Մարթաէն, Սառաէն, Լուկիէն եւ Կատարինէն, Ուստիանէն եւ միւս Վառվառէն, Մարիամէն, Սանտողտէն, միւս Հռիփսիմէն եւ կան Դ ընթերցող աղչիկ, որ է մոնթերէն էն յրեսի (կողմի, բակի) վաստակաւոր Սառէն, էս յրեսի յաւուրն անցեալ դռնաբանէն Խաչատուրէն, հողավաստակ Խաչատուրէն եւ մեծ որդին Յուսէփն եւ փոքրն Ղազարէն եւ մեր հացթուղ Որդանանէն եւ հացխան Սուսամբարէն, որ բազում աշխատանք ունի ի

14 Տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի*, հտ. Ա, էջ 302:

վերայ վանիցս մերոյ եւ Տէր Աստուած վարձատրեսցէ, ամէն»[15]:

1855 թուականից սկսած, թեմական առաջնորդի կարգադրութեամբ, անապատն ունեցել է նաեւ իր կանոնադրութիւնը[16]:

Համակարգելով Ընծայամատեանում նշուած անունների ցուցակը նկատենք, որ Նոր Ջուղայում բնակութիւն հաստատած խոշոր գերդաստաններից այստեղ ներկայ են Ս. Կատարինեանց վանքի կառոյցը նախաձեռնող Աղազարեանները կամ Լազարեանները՝ յանձինս խոջա Եղնազարի, Սաֆրազեանք՝ յանձինս երկու եղբայրների՝ խոջա Սաֆարի եւ խոջա Նազարի, Զոհրաբեանները՝ յանձինս Աւետիքի, Սուքիասեանները, Աղամալեանները, Սաֆարեանները, Ղօշղարէնք եւ Իհարկէ՝ Գերաքեան (Միրմանէնք) գերդաստանը:

Անդրադառնալով կին նուիրատուներին՝ հարկ է նկատել, որ նրանք անպայման յիշւում են իրենց ամուսինների հետ միասին, սակայն կան նաեւ առանձին աշխարհիկ կին նուիրատուներ, ինչպես օրինակ խոջայ Սլէմանի կողակից Ազատը, որը խոջա Սաֆարի քոյրն է եւ նրա դուստրերը՝ Խանզատը եւ Թագուհէն, եւ այլն:

Քիչ չեն նաեւ կուսակրօն կանայք (օրիորդները), ինչպես օրինակ մահդասի մայրպետ Թանկիկը, կոյս Սառէն, Դշխունը, Քրիստոսի հարսնացեալ Գայիանէն եւ Կատարինէն, կոյս մեծ Դասգոյնէն, կոյս Ուռուփսանէն, կոյս Շուշանը եւ այլն:

Կուսակրոն միանձնուհիները ե՛ւս զբաղուել են գրչութեամբ[17], *ձեռագրերի նորոգութեամբ, դրանց ձեռքբերմամբ եւ գնմամբ*[18]: *Նոյնիսկ յաղթահարելով զանազան արգելքներ, նրանցից ոմանք հասան մինչեւ Երուսաղէմ՝ այնտեղից ձեռագրեր եւ սրբերի մասունքներ բերելու՝ այս կերպ արժեւորելով իրենց միաբանութեան գործունէութիւնը:*[19]

«Ցուցակ Ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի» երկու հատորներում ցանկագրուած են Ս. Կատարինեանց մենաստանին պատկանող 21 ձեռագրեր, որոնք այժմ գտնւում են Ամենափրկիչ վանքի մատենադարանում:

Դրանցից կարելի յիշատակել ա՛յն ձեռագրերը, որոնց գտնուելու տեղն այժմ անյայտ է.

1. «Սաղմոսարան», ԺԷ դ., (պահւում էր Ս. Կատարինեանց վանքում):

---

15 Տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի*, հտ. Ա, էջ 303:

16 **Տէր Յովհաննեանց Յ.**, *Պատմութիւն Նոր Ջուղայ*, հտ. Բ, էջ 229-235:

17 1653 թ. գրչագրուած Քարոզգրքի յիշատակարանում հաղորդւում է. «Որ ետ կարողութիւն անարհեստ գրչի / Հասանել աւարտ այսմ գրքի /... Գրեալ եղեւ բան եւ գործի... / Եւ Նոր Ջուղայ կոչի, /... **Ի դուռն սուրբ Կատարինի / Որ Կուսանաց վանք անուանի**» (Տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի*, հտ. Ա, կազմեց Սմբատ Տէր-Աւետիսեան, Վիեննա, 1970, էջ 708-709: Քարոզգիրքը պահւում է Ս. Ամենափրկիչ վանքի մատենադարանում):

18 Այդպիսի ճակատագիր է ունեցել 1330 թ. Արտազում գրուած եւ Ս. Կատարինէում ապաստանած Աւետարանը (տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի*, հտ. Ա, էջ 74-75:

19 Համաձայն Ս. Կատարինեանց վանքի թիւ 16 ձեռագիր «Գիր օրինութեան» (1651 թ., գրիչ՝ Առաքել վրդ., Երուսաղէմ: Պահւում էր Ամենափրկիչ վանքի մատենադարանում, ներկայումս տեղն անյայտ), Ս. Կատարինեանց անապատի կոյսերից Տալիթէն մեծ դժուարութեամբ գնում է Երուսաղէմ եւ ժամանակի պատրիարք Առաքել վարդապետից ստանում է հետեւեալ սրբերի մասունքները եւ բերում անապատի համար «Տեառնեղբօր տասն է (?), Նիկողայոս հայրապետի կողիցն, Սուրբ Մինասայ գագաթն, Սուրբ Կատարինէ յուսագլուխն, Սուրբ Ըռիփսիմէ արմունքն ու մատն»: Նոյն սրբերի պատկերները եւս գրութեան ներքեւ նկարուած են» (տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի*, հտ. Ա, էջ 810)

2. «Ժամագիրք Ատենի», ԺԷ դ., (պահ-ւում էր Ս. Կատարինեանց վանքում, գրչութեան վայրն անյայտ: (Յիշատակարանում՝ «Որ ողորմի Քրիստոս Աստուած ստացող գրոցս Մարութէ եւ կողակիցն Սալզատէ եւ որդւոյն Միասարին, ամէն»):[20]

3. «Ժամագիրք Ճաշու», ԺԷ դ., (պահ-ւում էր Ս. Կատարինեանց վանքում, հաւանաբար գրուած Նոր Ջուղայում):[21]

4. «Քարոզգիրք», 1672 թ., (պահւում էր Ս. Կատարինեանց վանքում, գրիչ՝ Տէրոն, գրչութեան վայրն անյայտ, ստացող՝ Խաչիկ: Յիշատակարանում՝ «Յիշատակ է Խաչիկին եւ ծնողացն Սաֆարին... կողակից Գոզալին, որդի Սաֆարին, Եղեջանին»: Ապա՝ «Ի Թուականիս մերում 1833 եւ ամսիս օգոստոսի 23 եւ ես նուաստ եւ խոնարհ ծառայ Ս. Կատարինու յանապատիս ապաշխարող կոյս Սանդուղտ Տէր Գաբրիէլեան, խոստացայ եւ աշխատեցի լուսարար անուամբ սուրբ եկեղեցու ծառայութեան ...»):[22]

5. Գիր օրհնութեան (1651 թ., նախկինում եղել է Ս. Կատարինեանց վանքի սեփականութիւնը, ապա պահւում էր Ամենափրկիչ վանքի մատենադարանում, ներկայումս տեղն անյայտ. գրիչ Առաքել վրդ., Երուսաղէմ: (Ծանօթ. «Ս. Կատարինեանց անապատի կոյսերից Թալիթէն մեծ դժուարութեամբ գնում է Երուսաղէմ եւ ժամանակի պատրիարք Առաքել վարդապետից ստանում է հետեւեալ սրբերի մասունքները եւ բերում անապատի համար «Տեառնեղբօր տասն է (?), Նիկողայոս հայրապետի կողից, Սուրբ Մինասայ գագաթն, Սուրբ Կատարինէ յուսագլուխն, Սուրբ Ռիփսիմէ արմունքն ու մատն»: Նոյն սրբերի պատկերներն եւս գրութեան ներքեւ նկարուած են»): (Յիշատակարան չունի):[23]

Նկատենք, որ քիչ չեն նաեւ աշխարհով մեկ ցրուած ձեռագրերը, որոնց կարելի է հանդիպել զանազան գրապահոցներում:

Ստորեւ բերում ենք Սբ. Կատարինեանց վանքի Ընծայամատեանի տեքստը.

[ԺԵ][24]ՐԴԻ ՎԵՐՋԻՆ ԴԱՐՈՒՍ ՄԵՐՈՒՄ ԹԱՐՇԱՄԵԱԼ ՅԵՏՆՈՒՍԱՒ ՆՍԵՄԱՑԵԱԼ ԺԱՄԱՆԱԿԻՍ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՄԲՆ

Աստուծոյ Հօր եւ կամօք Միածնի որդոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի. շնորհօք եւ կարողութեամբ ամենազօր սուրբ հոգոյն. Թվին ՌՀԲ [1072=1623], եղեւ սկիզբն բարեաց եւ պատճառ շնորհաց, հաստատութիւն օրինաց, նոր Լուսաւորիչն Հայաստանեայց սուրբ Մովսէս հոգեւոր տէր եւ պատրիարգն ամենայն աշխարհաց, նոր արեգակ ծագեաց եւ 'ի յերկիրս Պարսից եհաս, բազում կարգ եւ սահմանք քրիստոնէից ուղղեաց, արանց եւ կանա[ն]ց վանքեր հաստատեաց: Զոր եւ աստուածասէր մահդասի խօջայ Եղնազարին հրամայեաց զկանանց մենաստանս. նա իւր հալալ արդեամբքն շինեաց: Շնորհօք եւ կարողութեամբն Աստուծոյ հիմնարկեաց տաճար տէրունական յանուն ամէնիմաստ սուրբ Կուսին Կատարինէ եւ զարդարեալ ջահիւք եւ լապտերօք եւ արար տեղ պատարագի եւ փառաբանութեան անմահ թագաւորին Քրիստոսի: Զոր եւ էնն Աստուած որդին Միածին հաստատուն եւ անշարժ պահեսցէ, հաշտարար պատարագօք մինչ ի կատարածն ի վայելումն սրբազան օրիորդաց, հալածումն դիւաց, հերքումն թշնամեաց, փարատումն ցաւոց եւ բժշկութիւն հիւանդաց, առողջութիւն կենաց, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց: Յերգս աւրհնութեան եղանակաց եւ քաղցրաձայն նըւագարանաց եւ պաշտօնէից, նըւէրք պատարագաց ի հոտ անուշ խնկոց, ի պայծառութիւն կանթեղաց եւ ջահից: Զոր եւ տէր Քրիստոս իւր ամէնազօր խնամօքն տայ վայելել աշխարհական, թէ՛ մեծատուն, թէ՛ ըռամիկ, թէ՛ հարուստ եւ թէ աղքատ, թէ ծերք, թէ

20 *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի*, հտ. Ա., էջ 482:

21 Նոյն տեղում, հտ. Ա., էջ 485:

22 Նոյն տեղում, հտ. Ա., էջ 716-717:

23 Նոյն տեղում, հտ. Ա., էջ 810:

24 «ԺԵ» զարդագրերի համար տեղ է բաց թողնուել՝ հետագայում ծաղկելու համար, որ այդպէս էլ չի արուել:

տղայք, թէ արք եւ թէ կանայք. ով ոք իցէ, որ նըւէրք եւ անօթք յիշատակ տացէ եկեղեցոյս, թէ շուրջառ, թէ սկայ, թէ խաչ, թէ աւետարան եւ թէ այլ գիրք որ կայ եւ թէ զինչ որ կարին պիտոյ է եւ զարդ եկեղեցոյ: Միոյն հարիւրապատիկ եւ Ռ[1000]ապատիկ հատուսցէ տէր Աստուած զերկնից արքայութիւն, ըստ այնմ որ ասէ, թէ երանի որ ունիցի զաւակ ի Սիոն եւ ընդանիք յԵրուսաղէմ[25], *որում եւ զձեզ աւրհնեսցէ եւ պահեսցէ անդորրելի կենօք եւ զհոգիս ձեր պայծառ դիմօք եւ երանական ձայնին արժանի առնէ, որ ասէ եկեայք աւրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք զանըսպառ եւ զանտրտում ուրախութիւն զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց ամէն:*

Աստուած աւրհնէ նախ զխօջայ Եղնազարն[26] որ շինեաց զեկեղեցին խցերով եւ տնտեսներովն եւ ետ վաղմ եւ յիշատակ եկեղեցուն մէկ խաչ, մէկ աւետարան, մէկ [յ]այսմաւուրք[27], մէկ սկա, մէկ շուրջառ եւ մէկ սաղավարթ, մէկ աւազանի ծածկոց, Բ[2] մոմդան, մէկ սկոյ աղլուխ: Աստուած մէկն Ռ[1000] հատուցանէ եւ զիւր որդի Նազարէթն անփորձ պահէ, ամէն:

Աստուած ողորմի խօջա Սուքիազին[28] հոգոյն. ետ սուրբ եկեղեցուս վաղմ մէկ շուրջառ, Գ շապիք:

Աստուած ողորմի խօջայ Առաքելին[29], իւր կողակից Ոսկէ. ետուն մեծ խորանին վարագուր, մէկ սկա, մէկ խաչ, մէկ մոմդան:

Աստուած ողորմի Մակարին. ետ մին սկայ:

Աստուած ողորմի խօջա Սաֆարին[30], կողակցին Խաթայէ. ետուն մեծ խորանին ղումաշ վարագուր, Բ սկոյ աղլուխ:

Աստուած ողորմի խօջա Ֆռանգուլին, կողակցին Խաթշիկին[31]. ետուն Ա արծաթէ կանթեղ, Ա ժամի շապիք, Ա մեծ խալի:

---

25 Հմմտ. Ես. 31.9

26 Նոր Ջուղայի Եղիազարեան կամ Լազարեան ընտանիքի տոհմաբանութիւնը եւ խոջայ Եղնազարի դիրքն այդ ծառի մէջ տե՛ս **Տէր Յովհաննեանց Յ.**, *Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան*, հտ. Ա, էջ 94-97, հտ. Բ, էջ 280-281: **Յովսէփ Թադէոսեան.** *Պատմութիւն Լազարեան տոհմի եւ Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց*, Վիեննա: Մխիթարեան տպարան, 1953, էջ 95-112 (Ազգային մատենադարան, ՃՀԶ): Տոհմագրութեան այս հատուածում եղած անհասկանալի հատուածների մասին տե՛ս **Խաչիկեան Ճ.**, *Նոր Ջուղայի հայ վաճառականութիւնը եւ նրա առեւտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII-XVIII դարերում*, Եր., 1988, էջ 101-102:

27 Յայսմաւուրքը ներկայումս պահւում է սբ. Ամենափրկիչ փանքի մատենադարանում (տե՛ս *Ցուցակ ձեռագրաց Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանայ թանգարանի*», հտ. Ա, Վիեննա, 1972, էջ 372; «Յայսմաւուրք», գրիչ Բարսէղ Երէց եւ Մեսրոպ դպիր, տեղի գրչ. Յարեւան գիւղ (Ասպահան), ժամանակ՝ ՌՀԹ (1630), ստացող՝ Խօջայ Եղնազար, ծաղկող՝ Մեսրոպ դպիր Խիզանեցի: Հմմտ. նաեւ *Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի յիշատակարաններ (1621-1640)*, աշխ. Յակոբեան Վ., հտ. Բ, Երեւան, 1978, էջ 400-401):

28 Խոջա Սուքիասը յիշատակւում է ԺԷ. դարի առաջին քառորդի յիշատակարաններում (տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանայ թանգարանի*, հտ. Ա, էջ 65, հտ.-Բ, էջ 41: Սուքիասեանների մասին տե՛ս նաեւ **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հտ. 1, էջ 154:

29 Խոջա Առաքելը որպէս ձեռագրի ստացող յիշատակւում է ԺԷ. դարի սկզբի յիշատակարաններում (տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի*, հտ. Ա, էջ 109:

30 Հայրը՝ խոջա Խաչիկը, հին Ջուղայի քալանթարն է եղել եւ Շահ Աբաս Մեծին հին Ջուղայում երեք օր տպաւորիչ ընդունելութիւն է ցոյց տուել 1603 թ.: Խոջա Սաֆարը 1605-1618 թթ. վարել է Նոր Ջուղայի քալանթարի պաշտօնը (տե՛ս **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հտ. Ա, էջ 88: *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի*, հտ. Ա, էջ 55: 208: **Խաչիկեան Ճ.**, Նոր Ջուղայի հայ վաճառականութիւնը, էջ 27-30: **Aslanean S. D.**, *From the Indian Ocean to the Mediterranean*, Univ. of the California press, 2011, p. 185.

31 «Խոջայ Ֆռանգուլն գովելի» յիշատակւում է հայերէն ձեռագրերի յիշատակարաններում: 1621 թ. որպէս վերջին ստացող 1236 թ. ձեռագրի «պարոն Ֆրանգուլն ետ վերստին նորոգել զսայ. ... յիշատակ ծնողաց իւրոց, հաւրն իւրոյ՝ առատամիտ եւ հեզայիոգի պարոնաց պարոն խօջայ Սաֆարին եւ մօրն Սուլթանփաշէ եւ եղբարց իւրոց սիրեցեալ եւ պատուեալ յաչս թագաւորաց, պարոն Մէլիքաղէն, պարոն Սուլթանումն, պարոն Ջալալն»: Ապա անուանապէս յիշւում են Ֆրանգուլի ընտանիքի բոլոր անդամները՝ «Դարձեալ յիշեցէք զխօջայ Ֆրանգուլն եւ զկողակիցն իւր զխաթշիկն եւ զորդիքն իւր՝ Բաբէն եւ զդըստերքն իւր Շամսղամարն եւ զորդիքն Մելիքաղին՝ Միքայէլն, զխաչիկն, Սինանն, Մէլիքնազն եւ զորդի Սուլթանումին՝ Սաֆարն...» (տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի*, հտ. Ա, էջ 55,

Աստուած ողորմի Մէլիքաղէ կողակից Նաշխունին, որդուն Մուքէլին, կողակից Սառային. ետուն Ա ոսկէտուփ աւետարան:

Աստուած ողորմի խոջայ Նազարին[32] կողակից Խաթունջանին. ետուն մէկ ոսկէտուփ Հարանց վարք:

Աստուած ողորմի Ոսկէկեռքէնց[33] Խաչատուրին եւ կողակից Գարանին. ետուն մէկ խաչվառ, մէկ մանդիլ, մին ջուխտ թեւք:

Աստուած ողորմի խոջայ Սլէմանի կողակից Ազատին[34] եւ դստերացն՝ Խանզատին, Թագուհէ ետուն մէկ ոսկէտուփ աւետարան[35]:

Աստուած ողորմի խոջայ Գէրաքին[36] եւ կողակիցն Տալիթէ ետուն մէկ ժամի շապիկ, մին գրակալի շարիք, մին վառփ ուշ, մին լալայ մոմդան իւր մղալովն:

Աստուած ողորմի խոջայ Աղազարին[37]. ետ մին շապիք, մին վակաս:

Աստուած ողորմի տէր Մուքէլին կողակցին Ղադամղթլէ. ետուն մէկ աւետարան, մին խորհրդանոցի վարաքուր, մին սկոյ աղլուխ, մին ժամի շապիք, մին դոնակի ծածկոց:

Աստուած ողորմի Գրիգորին եւ կողակից Դշխունին, իւր դստեր որդոցն ամենեցուն. ետուն յիշատակ մէկ [յ]այսմաւո[ւ]րք, մին ծընծղայք, մին զանկակ, մին դեղնապըղինձ նալբաքի:

Աստուած ողորմի մահդասի Եղիկին[38] իւր կողակից մահդասի Փաշախաթունին, որ ետուն ի դուռն սուրբ Կատարինէ եկեղեցոյն յիշատակ մէկ ժամագիրք, մէկ շարակնոց, միատեղ կազմած մէկ Գիլանի ժամի շապիք:

Աստուած ողորմի Ովանիսին. ետ՝ Բ կանթեղ:

Աստուած ողորմի խոջայ Քամալին[39] իւր կողակից Թիրվանդին, իւր դուստր Եղիսաբէթին. ետուն Բ շուրջառ, մին կարմիր, մին կանանչ, Բ ժամի ղումաշ շապիք, մին մանդիլ, Գ սկոյ ծածկոց:

208: Հմմտ. **Տէր Յովհաննեանց Յ.**, Ն. աշխ., հտ. 1, էջ 173:

32 Փաստաթղթում նուիրատուների ցանկում յիշատակուող Խոջայ Նազարի եւ իր գերդաստանի անդամներից՝ Սաֆարի, Ֆրանգուլի, Մելիքաղու եւ իրենց ընտանիքների անդամների ու տոհմագրութեան մասին աւելի մանրամասն տե՛ս **Յ. Քիւրտեան**, *Ջուղայեցի խոջա Սաֆար եւ խոջայ Նազար եւ իրենց գերդաստանը*,- «Բազմավէպ», 1975, թիւ էջ 379-396; 1976, թիւ 1-2, էջ 52-73; թիւ 3-4, էջ 375-395 (յօդուածաշարը աւելի լրացուած եւ ճշգրտուած տարբերակն է նոյն հեղինակի նախկինում տպագրած աշխատանքի՝ *Ջուղայեցի խոջայ Նազար եւ իր գերդաստանը*,- «Հայրենիք» ամսագիր, 1943, թիւ 4, 72-82, թիւ 5, էջ 63-73, թիւ 6, էջ 69-87):

33 Ոսկէքեռցէնց ընտանիքի տապանաքարերը մինչ այսօր պահպանուած են Նոր Ջուղայի գերեզմանոցում (տե՛ս **Մինասեան Լ. Գ..**, *Նոր Ջուղայի գերեզմանատունը*, Նոր Ջուղա, 1985, էջ 41):

34 Խաթուն Ազատը Խոջա Սաֆարի եւ Խոջա Նազարի քոյրն է, խոջա Խաչիկի դուստրը (*Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի*, հտ. Ա, էջ 168-169):

35 Խօսքը 1727-ին գրչագրուած եւ սբ. Կատարինեանց վանքի սեփականութիւնը դարձած Աւետարանի մասին է, որի գրիչն եւ ծաղկողը Մեսրոպ դպիր Խիզանեցին էր, իսկ ստացողը՝ Խաթուն Ազատը: Վերջինս յիշատակարանում խնդրում է յիշել նաեւ «զխօճայ Սուլէյմանն եւ ծնօղսն խօճայ Վալին եւ զՍուլթանն» (յիշատակարանը տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի*, հտ. Ա, էջ 168):

36 Գերաքի (աղա Ցակոբի որդի) մասին տե՛ս **Տէր Յովհաննեանց Յ.**, Ն. աշխ., հտ. Ա, էջ 139: Հմմտ. *Ցովհաննէս Տէր-Դաւթեան Ջուղայեցու հաշուետումարը*. Աշխ. Լ. Ս. Խաչիկեանի եւ Յ. Դ. Փափազեանի, Երեւան, 1984, էջ 12-13:

37 Արդեօ՞ք նոյն Աղազարն է, որ 1632 թ. յիշատակարաններից մեկում, զուգահեռ «իշխանութեանն մերոյ գեաւղիս Խաւճա Նազարին», յիշւում է որպէս «տանուտէր» (տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի*, հտ. Բ, Վիեննա, 1972, հտ. Բ. էջ 138): Հմմտ. նաեւ **Տէր Յովհաննեանց Յ.**, Ն. աշխ., հտ. Ա, էջ 94-95; նաեւ **Շ. Խաչիկեան**, *Նոր Ջուղայի հայ վաճառականութիւնը*, էջ 101-102):

38 Իմա՛ Մահդասի «շիրաչի» Եղիկ, որդի Ցովհաննէսի եւ Ղրմզի, եղբայրը՝ Խոջա Ցովանէս, քոյրը՝ Ատամզութլէ, որդին՝ Ցովաննէս, երեքամեայ հանգուցեալ որդին Մկրտիճ, դուստրը՝ Ծաղիկ, եւ հանգուցեալ դուստրը Եղիսաբեթ (իր պատուիրած յայսմաւուրքների յիշատակարանները տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի*, հտ. Ա, էջ 403-404, հտ. Բ, էջ 107):

39 Յիշատակւում է Նոր Ջուղայի վաճառականական ցանկերում (տե՛ս **Տէր Յովհաննեաց Յ.**, Ն. աշխ., հտ. Ա, էջ 172):

Աստուած ողորմի Աթանասին, իւր կողակից Մարիամին, որդոցն Աւետքին, Առաքելին, Մատուրին. ետուն մէկ ատլաս զառօվ քաշած բեմի ծածկոց, մին դեղին ժամի շապիք, մին ուրար, մէկ աթոռք:

Աստուած ողորմի Քարամ խաթունին, իւր կողակից Աւետին. ետուն մէկ մեծ խաչ, մէկ խալի:

Աստուած ողորմի Զօ[հ]րապէնց Աւետկին[40], *իւր կողակից Եղիցաբեթին. ետուն մէկ խալիչայ, մէկ սկոյ ծածկոց, Բ մոմդան:*

Աստուած ողորմի Ղօճղարինց[41] *Մատուրին, իւր կողակից Մարիամին. ետուն մէկ մեծ խաչ, մեծ խորանին՝ չիթ վարաքուր, մէկ աւետարան, մէկ ատլաս կապան, մին ջուխտ թեւք:*

Աստուած ողորմի Ափկարին եւ կողակից Հռիմսիմէ. ետուն մէկ մախմուռ բեմի ծածկոց, մէկ ժամի շապիք, մէկ ուրար, մէկ արծաթով սաղավարդ, ոսկի խաչվառ, Բ սկոյ ծածկոց:

Աստուած ողորմի մահդասի մայրպետ Թանկիկին, որ ետ ի սուրբ Կատարինէ եկեղեցոյս մէկ ձեռնախաչ, մէկ դեղին դարայի շապիք, մէկ սաղավարդ, մէկ քաշած բարձ, սուրբ սեղանին ծածկոց:

Աստուած ողորմի Թանումին, Երզուլէ իշխանին. ետուն նըւէրք մէկ քաշած աւազանի վարաքուր, մէկ խալի, մոմդան:

Աստուած ողորմի Սառէ, իւր ծնօղաց Մալինին, Գօզալին. ետուն Բ Աստուածածնի պատկեր, մէկ ճաշու գիրք[42]*:*

Աստուած ողորմի Դշխունին[43]*. ետ յիշատակ մէկ ձեռնախաչ, մէկ շապիք, մէկ սկոյ. աղլուխ, մէկ մանդիլ, մէկ դռնակի ծածկոց:*

Աստուած ողորմի Զաքարէ[44]*. ունի յիշատակ մէկ խորհրդատեղի վարաքուր:*

Աստուած ողորմի Եթարին[45]*. ետ մէկ ջուխտ թեւք, մէկ ուրար, Բ կանթեղ:*

---

40 Զոհրապեան ընտանիքի մասին տե՛ս **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հտ. Ա, էջ 154:

41 Ղոչղարէնց ընտանիքը յիշւում է Նոր Ջուղայի տասնեակների ցանկերում (տե՛ս **Խաչիկեան Շ.**, *Նոր Ջուղայի հայ վաճառականութիւնը*, էջ 42-43:

42 Խօսքն ամենայն հաւանականութեամբ սբ. Կատարինեան վանքում պահուող 1401 թուականի Ճաշոցի **վերանորոգողի** մասին է: Վերջինիս անթուական յիշատակարաններից մեկը խնդրում է. «... յիշեցէք ի սուրբ յաղօթս ձեր զկրօնաւոր **զկոյս Սառային**, որ վերստին նորոգել եւ կազմել ետուր զճաշու գիրքս յիշատակ իւրն եւ իւր ծնօղացն» (տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի*, հտ. Ա, էջ 261: Հմմտ. նաեւ *Հայերէն ձեռագրերի ԺԷ դարի յիշատակարաններ (1621-1640)*, հտ. Բ, աշխ. Վ. Յակոբեան, հտ. Բ, Երեւան, 1978, էջ 720-721):

43 Դշխունը մեզ յայտնի է արդէն վերեւում մեր յիշատակած, 1401 թ. գրչագրուած Ճաշոցի յիշատակագրութիւններից մեկից. «Խաչատուր վարդապետին աթոռակալութենովն եւ նորա վկայութեամբն եւ՝ **Դշխունս** իմ կամաւ եւ յօժարութեամբ իմ Ճաշու գիրքն ծախեցի, տէր Մարտիրոսն **Կանանց յանապատին համար առէց** ԺԵՌ (15000) դեան, թվական ՌՁԷ (1638) մարտի ԻԸ (28) Զատկին առաջին շաբաթին չորեքշաբթի աւրն: Էլ ոչ ով այլ եւ այլ չանէ՝ ո՛չ դուստր, ո՛չ որդի եւ ո՛չ այլ ինչ ազգական» (*Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի*, հտ. Ա, էջ 261: Հմմտ. նաեւ *Հայերէն ձեռագրերի ԺԷ դարի յիշատակարաններ (1621-1640)*, հտ. Բ, էջ 720-721):

44 Անկասկած նոյնականանում է սբ. Կատարինեան վանքի սեփականութիւն հանդիսացող ԺԵ.-ԺԶ. դդ. գրչագրուած ձեռագրերից մեկի ստացող Զաքարի հետ: Համաձայն յիշատակարանի «ողորմի ասացէք ստացաւղի Սուրբ Աւետարանիս **Զաքարիս** եւ իւր ծնօղացն Խլղաթին եւ Ինախին եւ կնոջն Զմրութիւն եւ եղբարցն Շաղաւաթին եւ Շաղուբաթին, քրւերցն Գոհարին եւ **Էթարին**» (տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի*, հտ. Ա, էջ 163, 250, նաեւ էջ 252): 1633 թ. Զաքարէի պատուէրով գրուած Աւետարանի յիշատակարանն աւելի է ընդլայնում մեր տեղեկութիւնները վերջինիս ընտանիքի վերաբերեալ: Այսպէս. «Կատարեցաք զՍուրբ Աւետարանս Մեսրոպ դպիր Խիզանցի եւ Աստուածատուր սարկաւագ ... ի հայրապետութեան մերում Խաչատուր Վարդապետի, ի դառն եւ ի նեղ ժամանակի: Գրեցաւ զսա ի յերկիրն Պարսից, ի քաղաքն Ասպահան, որ կոչի Շօշ, յեզր պարսպին Նորաշէն, ... ի խնդրոյ բարեմիտ եւ աստուածասէր, հեզ եւ հնազանդ, ողորմած եւ հիւրասէր, գերեաց ազատող պարոն Մէլիք Զաքարէն եւ եղբայրն իւր Ախիջան ... եւ եղին յիշատակ իւրեանց եւ ծնաւղաց իւրեանց հաւրն Խլղաթին եւ մաւրն Շահզադին...: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՄէլիք Զաքարէն եւ զկողակիցքն Խանաղէն, դուստրն Գաւազալաղէն եւ միուս կողակիցն Նուբարն եւ որդիքն իւրեանց Դիլաքն, Քուչիբէկն, Արղութաբէկն եւ դուստր Գուլվարդն, կողակիցն Գուլումն եւ զամենայն արեան մերձաւոր...» (տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի*, հտ. Ա, էջ 162-163):

45 Մելիք Զաքարէի քոյրը (տե՛ս նախորդ յղումը):

Աստուած ողորմի ... ... [քերուած է գրութիւնը]:

Աստուած ողորմի Մանուկ Նաւասարդին եւ քվերն իւր Ոգուհէ. ետուն մէկ ատլաս կապան, մէկ զառ ուրար, Ա ջուխտ թեւք, Գ սաղավարդ, Գ աւետարանի ծածկոց:

Աստուած ողորմի Քարէնց Աստուածատրէ[46], *իւր կողակից Բաջիկին. ետուն մէկ ճարմակ թէրվանդայ շուրջառ:*

Աստուած ողորմի Շադլըղինց Մարգարին[47], *իւր կողակից Անայէ. ետուն մէկ ոսկէգիր մագաղաթ շարակնոց:*

Աստուած ողորմի մահդասի Թորոսին[48], *կողակցին Մարգարտին, Աստուածատրին եւ քվերն Վառվառին. ետուն մէկ ժամի շապիք, մէկ մարտիրոսատան վարաքուր, Ա բոզչայ, Ա սկոյ ծածկոց, Ա պըղընձէ առթավայ, Ա ջուխտ կանանչ սարանդազ խաչվառի:*

Աստուած ողորմի Մանուկ Նազարէթին, իւր ծնող Առաքելին. ետուն մին ճարմակ զառ բեմի ծածկոց, Ա ուրար, Ա ջուխտ թեւք, Ա մանդիլ, Ա սկոյ ծածկոց, Ա չիթ բոզչայ:

Աստուած ողորմի Բաղդասարին. ետ Բ սարանդազ խաչվառի, Ա լագան:

Աստուած ողորմի Առաքելին եւ կողակից Սըլիմին, իւրեանց որդի Աւետիքին. ետուն Ա բոլորակով ձեռնախաչ, Ա աւետարանի ծածկոց:

Աստուած ողորմի Մարութէ իւր կողակից Սալումին. ետուն մէկ ատենի ժամագիրք[49]:

Աստուած ողորմի Մարիամին[50], *որ ետ Ա սկոյ աղլուխ, Բ կանթեղ:*

Աստուած ողորմի Իշխանին[51], *որ ետ մէկ ոսկէգիր խորհրդատետր*[52]:

Աստուած ողորմի տէր Պողոսին եւ կողակցին Եփրոսինէ, որ ետ մէկ զառով քաշած սաղավարդ:

Աստուած ողորմի [մի բառ քերուած] *Ասլիջանին, իւր որդի Յակոբջանին. ետ յիշատակ մէկ սուրմաքաշ մարգարտով զարդարած վակաս:*

Աստուած ողորմի Քրիստոսի հարսնացեալ Գայիանէ եւ Կատարինէ[53], *որ ետուն մէկ բանավշ ատլաս զառով քաշած եմիփորոն պատարագի:*

Աստուած ողորմի Ուղիդէ[54]՝ *Ա պատարագի զունար ետ:*

Աստուած ողորմի Ալամին, ունի յիշատակ Բ սկոյ ծածկոց, Ա խորհրդատեղի ծածկոց:

Աստուած ողորմի խոջայ Աղամալին[55] *եւ կողակցին Ասլիխաթունին, իւրեանց որդի Նաւասար-*

---

46 Տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի*, հտ. Ա, էջ 150, 202:

47 Նոր Ջուղայի Շադլղենց ընտանիքից Աւետիքի որդին՝ Աղափիրին յիշւում է 1658-1680 թթ. Սուրաթ Բանդարում գրուած *Բժշկարանի* յիշատակարանում (տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի*, հտ. Ա, էջ 849):

48 1646 թ. գրուած Աւետարանի յիշատակարանը աւելի է մանրամասնում ընտանիքի անդամների անունները. «... յիշեցէք ի Քրիստոս զԽոճա Թորոսն եւ զկողակիցն իւր՝ զՄարգարիտն եւ զմիւս կենակիցն՝ զՄարիամն եւ զորդիքն Յոհանն, Յարութիւնն, Աւետիքն եւ զդստերքն իւր՝ զԽանբէյ կին, զԳայիանէն եւ զՎարդխաթունն» (տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի*,, հտ. Բ, էջ 33):

49 ԺԷ դ. գրուած այս նուիրատուութիւնը պահւում էր սբ. Կատարինեան վանքում, տե՛ս «Ժամագիրք ատենի», (*Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի*, հտ. Ա, էջ 482): Ստացողի յիշատակարանը հաղորդում է՝ «Որ ողորմի Քրիստոս Աստուած ստացող գրոցս Մարութէ եւ կողակիցն Սալզատէ եւ որդոյն Միասարին, ամէն»: Ներկայումս գտնուելու վայրն անյայտ է:

50 Տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի*, հտ. Ա, էջ 510:

51 Նոյն տեղում:

52 Մահդասի Իշխանի նուիրած, 1660 թ. գրուած, Խորհրդատետրի յիշատակարանը տեղեկացնում է. «... ի խնդրոյ բարեմիտ մահդասի Իշխանին, զոր բազում սիրով եւ փափագմամբ ետ գրել զսուրբ խորհուրդս ...: Եւ ետ ի վանս Կուսանացն, որ կոչի Կատարինեա, յիշատակ իւրն եւ ծնողացն, ի վայելումն վարդապետաց եւ քահանայից...» (տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի*, հտ. Ա, էջ 509-510, պահւում է Զարսու թաղի Ս. Յովհաննէս եկեղեցում):

53 Երկու կոյսերն էլ յիշւում են սբ. Կատարինէի միաբանուհիների 1660 թ. ցանկում (տե՛ս նոյն տեղում):

54 Յիշւում է 1660 թ. սբ. Կատարինէի միաբանուհիների ցանկում (տե՛ս նոյն տեղում):

55 Աղամալեան ընտանիքից (տե՛ս **Տէր Յովհաննեանց**, նշ. աշխ., հտ, Ա, էջ 150): 1650 թ. յիշւում է որպէս ստացող մի աւետարանի («զբարեսէր եւ զհանճարեղ վաճառական խոճա Աղամալն ... յի-

դին ետուն. յիշատակ զսուրբ աջն Ստեփաննոս Նախավկային արծաթով եւ ոսկով զարդարած, մէկ զառով ծածկոց ի վերայ:

Աստուած ողորմի Անայէ[56] *մէկ զառով քաշած զունար:*

Աստուած ողորմի ոսկերիչ Սահակին, իւր կին Ուղիդէ, ետուն մէկ ժամի շապիք, բանաւշ քաշած:

Աստուած ողորմի Ալամին ..... [անընթեռնելի բառ] *մէկ խորհրդատեղի ծածկոց, Բ սկոյ աղլուխ:*

Աստուած ողորմի մահդասի Ղօկասին, իւր կողակից Մերտատիկին, ետ մէկ ժամի շապիք:

Աստուած ողորմի Յարութենիս, իւր կողակից Խանտատիկին. ետ յիշատակ մէկ ոսկէ ձեռնախաչ, Գ ոսկէխաչ թեւերին վերայ, մէկ նաղտաքալ բեմի ծածկոց, մէկ սկոյ աղլուխ, մէկ խորհրդատեղի վարագուր:

Աստուած պահէ Սողոմէ որդին. ետ մէկ սկոյ աղլուխ:

Աստուած ողորմի Մամարին, իւր դուստր Վառվառին[57]*. ետ յիշատակ մէկ շուրջառ, մէկ շապիք, մէկ վարշամակ, Բ սկոյ աղլուխ, Ա ջուխտ թեւք, մէկ խորհրդատեղի ծածկոց, մէկ աւետարանի ծածկոց:*

Աստուած փառաւորէ Բարսեղ վարդապետն[58]*. ետ Բ դաստառակի պատկեր Փրկչին:*

Աստուած ողորմի Թիրվանդէ որ ետ վասն նշխարաց մէկ չինի սահն. մէկ նալբաքի:

Աստուած ողորմի Իվանէ իւր կողակից Սադրիխանին. ետուն ի սուրբ Կատարինէ եկեղեցոյս վաղմ մէկ արծաթէ ձեռնախաչ, մէկ ոսկի սուրբ Նշան մասովն Թադէոս առաքելոյն, Աստուած իւր որդոցն օգնական լինի:

Աստուած սուրբ Մանկանցն դասակից առնէ զՓիրվաղաթն որ ունի յիշատակ մէկ ժամի շապիք, մէկ զառով ուրար:

Աստուած ողորմի փոկրիկ Զարիֆխանին որ ետուն մէկ ժամի շապիք:

Աստուած ողորմի մահդասի Առաքելին[59] *իւր կողակից Դանունէ, իւր դստերացն Եղնարին եւ Գուլնաբաթին, որ ետուն ի վանքս յիշատակ իւրեանց հոգոյն մէկ ձեռնախաչ, մէկ շուրջառ, մէկ շապիք, մէկ ուրար, մէկ կապան, մէկ ջուխտ թեւք, մէկ սաղավարթ, մէկ սկոյ աղլուխ, մէկ զառով փէշգիր, մէկ բոխչայ. Աստուած մէկն Ռ[1000] հատուցանէ. ամէն:*

Աստուած ողորմի Փանոսին, իւր կին Անայէ, իւրեանց ծնօղացն ետուն Բ գրքակալի շապիք, մէկ խազտեար:

Աստուած ողորմի Շահումին, Եղիսաբեթին ետուն մէկ փուռ քաշած սկոյ աղլուխ:

շատակ ... ծնողացն Առաքելին եւ Եմէնփաշային, որ փոխեցեալ են ի անանց կեանսն»), որի յիշատակարանը պատուիրում է. «յիշել ի Տէր զխօճա **Աղամալն** եւ զհամեստ ամուսինն իւր զ**Ասլիխաթունն** եւ ըզորդիքն իւր զպարոն Դաւիթն եւ զՆաւասարդն... եւ զհանգուցեալ առ Քրիստոս դուստրն Ոսկինն յիշեցէք եւ ... ողորմի ասացէք: ...Դարձեալ յիշեցէք զպարոն Աղամալն եւ զեղբայրն իւր խօճա Վալին եւ զՍիմէօնն եւ զհանգուցեալն ի Քրիստոս Պարաքիասն եւ Սաֆարն» (տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի*, հտ. Ա, էջ 174): Արդեօ՞ք նոյն Աղամալն է, որն ըստ Զաքարիա Քանաքեռցու, Սպահանից, բազում վաճառականների մուրհակներով, Նոր Ջուղայի քալանթար Սաֆրազի յանձնարարութեամբ եկել էր Արարատեան երկիր՝ նրանց պարտքերը ստանալու համար (տե՛ս **Զաքարիա Քանաքեռցի**, *Պատմագրութիւն*, Վաղարշապատ, 1870, հտ. Բ, էջ 86): (Զշփոթել Աղամալ Խոջա-Մինասեանց Ջուղայեցու հետ, որին ժամանակագրողն մօտ է կանգնած: Վերջինիս մասին տե՛ս **Յ. Անասեան**, *Հայկական մատենագիտութիւն, Ե.-ԺԸ. դար*, հտ. Ա, Երեւան, 1959, էջ 524-529, վերջինիս դիրքը ընտանեկան տոհմագրութեան մէջ տե՛ս **Aslanian S. D.**, նշ. աշխ., էջ 162):

56 Յիշւում է սբ. Կատարինէի միաբանուհիների 1660 թ. ցանկում (*Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի*, հտ. Ա, էջ 510):

57 Մամարը եւ Վառվառը յիշւում են 1660 թ. սբ. Կատարինէի միաբանուհիների ցանկում (տե՛ս նոյն տեղում):

58 Տէր Բարսեղը սբ. Ամենափրկչի վանքի միաբաններից էր (տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի*, հտ. Ա, էջ 5): Համաձայն նոյն յիշատակարանի. «սիրելին ամենեցուն, զԲարսէղ քաջ հոիտոր եւ ճշմարտութեան վարդապետն, ... վաղճանեալ ի տիս երիտասարդութեան» ի ՌԾ եւ Է (1658) թուին» (նոյն տեղում էջ 5):

59 1636 թ. գրուած ձեռագրի յիշատակարանը կոչում է յիշել «զմահտեսի Վաթանն եւ ծնողսն իւր մահտեսի **Առաքելն եւ Դանունին** եւ քուերքն իւր Զատէն եւ Գետսաման» (*Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի*, հտ. Ա, էջ 169):

Աստուած Վառվառին բարի զաւակ տայ, եւ մէկ զառով քաշած սկոյ ծածկոց:

Աստուած ողորմի Մանուկաղա Թեղէ կողակից Անայէ եւ յիշատակ մէկ զառով սկոյ աղլուխ:

Աստուած ողորմի տէր Աթանիսէնց Սաֆարին, եղբօրն Բաբամին, կողակից Մարիամին, որդոցն Տէրոնին, հարսն Մարիամին եւ ունն յիշատակ մէկ ամառան հատոր քարոզգիրք[60], մէկ կանթեղ, մէկ սկոյ ծածկոց:

Աստուած ողորմի Գրիգորին, կողակցին Դշխուն[61]. եւ ունն մէկ Հարցմունք գիրք:

Աստուած ողորմի խոջայ Շէկ Եավրէ կողակցին Մարիամին իւրեանց որդի Յովաննիսին եւ ունն մէկ ոսկէտուփ կոստղած աւետարան, մէկ բանբակէ խալի, Բ շամդալ մոմդան, Բ բլոր մոմդան:

Աստուած ողորմի Պետրոսին, կողակցին Սաֆուրին, իւր որդոցն Գրիգորին եւ Ահարոնին. եւ ունն մէկ փաթ փէշգիր, մէկ սկոյ ծածկոց, մէկ զումաշ շապիք, մէկ ուրար, մէկ ջուխտ թեւք:

Աստուած ողողորմի Դուս Մեծ Թագուհէ[62], որ եւ որոր յիշատակ Ա խորհրդատեղի քաշած վարաքուր, Ա սկոյ զառ աղլուխ, Ա դռնակի թիրվանդայ շոր, Ա սարանդազ քշոցի, Ա ժամի շապիկ:

Աստուած ողորմի մահդասի Իշխանին[63], Եպրակսէ, որ եւ յիշատակ Ա խորորդ[ա]տեղի վարայքուր, Ա աւազանի վարարաքուր, Դ դռն[ակի] շոր, Ա աղլուխ, Ա զավադան, Ա չամչիկ:

Աստուած ողորմի Դա[...] խարս Սէլէլի. արեւ Ա վրկալին շապիկ:

Աստուած ողորմի Փաշամի[...] արեւ Ա գրքակալի շապիկ:

Աստուած արքայութիւն տայ Կուսմարդէ, որ բազում երեխտիկ ունի մեր վանացս, մանավա[ն]դ Ծ մսխալ արծաթ. էտոր որ ցգեցինք քշոցին վերայ, յիշատակ իւր հոգոյն եւ իւր հայր Յակոբին եւ ի իւր մայր Այլիփաշէ հոգոյն, Աստուած հատուսցէ իւր երեխտիւք [...]

Աստուած ողորմի Փառմանձնէ հոգոյն եւ իւր որդի Եղումին. եւ ունն մեր վա[ն]քի... մին մեծ խալի:

Աստուած ողորմի կոյս մեծ Դասգոյնէ հոգոյն Աւետ Փաշէ դուստր կոյս Ուռուփսանէ հոգոյն. տվին վաղմ կանայնոց վանքին [...քերուած] մին ձեռնայխաչ որ Ճ մսխայլ ոսկայ ջրած մին պատկեր ԵՌ դէկնոյ այ. ծածայն ընջումն Աստուած իւրեա[ն]ց հոգոյն ողորմի:

Աստուած ողորմի Մարտիրոսին դուստր Սարալվէ. արեւ մին ուրար մին միայփորան, մին թեւանոց:

Աստուած ողորմի Գրիգորին եւ ուր կողակից Սափուրին, եւ ուր որդուն Յարութիւնին կողակից Ֆլորին մին կարմիր դարայի ժամի շապիք, մին սաղավարթ, մին թեւանոց:

Աստուած ողորմի Քարէնց Քաֆթանին եւ ուր կողակից Սանդուխտին. արեւ մին մին զառ թեւանոց, մին քաշած սաղավարթ:

Աստուած ողորմի Կիրակոսին. արեւ ոսկով սեղանի ծածկոց, Է. աւետարանի աղլուխ, խոր[հ]ուրդայտեղի վարայգուր, մին ժամի [...պատռուած] դարայի բոզչայ:

Աստուած ողորմի խոջայ Պետրոսին եւ ուր կողակից Զատէ. արեւ մին սկոյ աղլուխ:

Աստուած ողորմի Մէլիքն Աղին[64] եւ ուր կողակից Անայփիէ. արեւ մին սեղանի ծածկոց, մին գուփորան:

Աստուած ողորմի Վարթէրին եւ ուր կողայկցին. արեւ [մին] ձեռնայ խաչ:

Աստուած ողորմի Սաֆարին եւ ուր կողակից Փաթանին. արեւ մին ձեռն[այխաչ] ... ... իէլ գիր:

Աստուած ողորմի ապաշխ[արո]ղ Մարամին. արեւ մին կոստղաց աւետարան [...]ին աղլուխ:

---

60 Արդեօ՞ք ԺԶ-ԺԷ դդ., «Քարոզգիրք Գրիգորի Տաթեւացւոյ», ձեռագրի մասին է խօսքը (տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի*, հտ. Ա, էջ 702, յիշատակարանը. «Ի վայելումն Աթանէս աբեղային. թիւն ՌՃՀԴ-ումն (1725) վերջ»: Գրչութեան տեղն անյայտ:

61 Տե՛ս աստ, ծանօթ. 43:

62 Ցիշւում է սբ. Կատարինէի միաբանուհիների 1660 թ. ցանկում (*Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի*, հտ. Ա, էջ 510):

63 Իշխանը նաեւ ձեռագիր է ընդօրինակել սբ. Կատարինեանց վանքում: Սբ. Ամենափրկչի մատենադարանի թիւ 304 քարոզգրք չափածոյ յիշատակարանում իր մասին գրում է. «Ի դուռն սուրբ Կատարինի / Որ Կուսանաց վանք անուանի / Եւ զգրող յայսմ գրի, / Ես Իշխան մեղօք ի լի, ...» (տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի*, հտ. Ա, էջ 709):

64 Մելիք Աղայի ընտանիքի եւ ժառանգների մասին տե՛ս **Տէր Յովհաննեանց Յ.** նշ. աշխ., հտ. Բ, էջ 17:

Աստուած ողորմի Նօբաթին. արեւ մին սկոյ աղլուխ:

Աստուած ողորմի Գրումին [ա]բեւ մին սկոյ աղլուխ:

[փաստաթղթի եռեւում՝]

Աստուած պարոն Միրզէ յերկար ումբր տայ եւ ուր կողակից Տարկուր. որ եւ մին ասայղուլի լաչիկ, որ է սկոյ ծածկոց:

Աստուած ողորմի Մանուկ Գրիգորին եւ ուր կողակից Սրմալին եւ ուր դուստր Մարիամ խանումին. արեւ մին մեծ սկի ոսկիով զարդարած, մին արծաթէ կանթեղ:

Աստուած ողորմի Մալխանի. եւ սուրբ Կատարինէ եւ իւրն յիշատակ մեծ տաճարին վարաքուր:

Աստուած ողորմի Շատախօսէնց[65] Յանայէ եւ իւր կողակցին. սուրբ Կատարինէ տաճարին մին վարաքուր:

Աստուած ողորմի տէր Սարգիս խօր եւ մօրն եւ իւր կողակից Ազատին. արեւ յիշատակ սուրբ Կատարինէ մին սկի, մին զալամքար վարաքուր տաճարին մին ձեռք ըսգբսեւ պատարաքի:

Աստուած ողորմի Դադոսին եւ իւր կողակից Վարթէրի. արեւ բեմիին մին սուզանի ճարմակ քաշած:

Աստուած յերկար ումբր տայ Հէրապետին. Աստուած իւր կողակից Լելխանին արեւ մին սկոյ աղլուխ զալամքար:

Աստուած յերկար ումբր տայ Ջաքոչենց պարոն Մինասին եւ իւր որդոցն յերկար կեանք տայ. տվէց սուրբ Կատարինէ եւ իւր յիշատակ մին արծաթէ սկի, մին պղ[ն]ձէ բուռվառ:

Աստուած յերկար կեանք Ջիթսազէնց պարոն Յովանիսին եւ իուր որդանքն. արեւ մին սկոյ աղլուխ զառով քաշած:

Աստուած ողորմի կոյս Շուշանի[66] հոգոյն եւ հօր՝ Մարուքին եւ իւր մօր՝ Վառվառին. տվէց յիշատակ իւրայնոց հոգո[յ]ն մին վակազ, մին քաշած սաղավարթ, մին խաչ արծաթէ:

Աստուած ողորմի կոյս Թանկումին, Վառվառին եւ Շամիրանին[67] օր իւրեանց հալալ վաստակովն ամէնքն Ի-Լ մսխալ արծաթ գնացին պզտիկ արծաթէ բուռվառին վերայ մեծացուցին:

Աստուած յերկար կեանք տայ էգազին խօջին եւ իւր կողակ[կից] Մանդլինէ, որ եւ սուրբ եկեղեցուն մին մկրտութեան ղզղան:

Աստուած ող[որ]մի Ջիպիտէ կենդանի հոգո[յ]ն, որ եւ ուրն յիշատակ մին շուրջառ:

Աստուածային սիրովն վառեալ եւ ի գթութիւն շարժեալ, աստուածասէր եւ բարեպաշտ այրն Աստուծոյ, ողորմած հոգի Ջանկրի որդի պարոն Աղաջանն, որ իւրով կամաւն եւ յօժարութեամբն, իւր զառխրիտայ Ղարագէլի մօտ այգին եւ վաղմ եւ յիշատակ իւրոց ծնողացն. այսինքն լուսահոգի Ջանկրին հօրն եւ մօրն՝ Հէրիքնազին եւ եղբօրն՝ Եփրումին եւ իւր որդի Ջանկրին եւ իւր ամենայն արեան մերձաւորացն[68]:

Աստուած հոգին լուսաւորէ սոցա հոգին եւ փոխարէնն յարքայութենէն Քրիստոսի առցեն զվարձս եւ զօր ինչ պաշտօն եւ պատարագ մատուցի սրբոյ Անապատիս վերոյ յիշելոցն. մասն եւ բաժին լիցի. ամէն:

Զվաղմիաթ այգին որ եւ սրբոյ Կատարինեայ Անապատիս, զի ո՛վ ոք որ յետ մեզ լինիցին, միշտ յիշեսցեն զվերոյ գրեալքս եւ ազատեսցեն յիւրեանց պարտապանութենէն:

---

65 Խոջա Շատախօսի եւ իր ընտանիքի անդամների յիշատակութիւններով բազում առեւտրա-տնտեսական բնոյթի փաստաթղթեր են մեզ յայտնի:

66 Շուշանը յիշւում է սբ. Կատարինէի միաբանուհիների 1660 թ. ցանկում (տե՛ս *Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի*, հտ. Ա, էջ 510):

67 Յիշւում են միաբանուհիների 1600 թ. ցանկում (տե՛ս *Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի*, հտ. Ա, էջ 510):

68 Կալուածքի նուիրաբերման այս օրինակը յատուկ արձանագրուել է նաեւ Նոր Ջուղայի պատմագրի կողմից (տե՛ս **Տէր Յովհաննէսեանց Յ.**, նշ. աշխ., հտ. Բ, էջ 237):





y of Armenia